ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/80/2025

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 31 մարտի 2025թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), մասնակցությամբ Հանձնաժողովի անդամներ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի և Արմեն Մարուխյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2025 թվականի մարտի 31-ին քննելով ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի ղեկավար Կառլեն Սամվելի Մկրտչյանի նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով առերևույթ խախտման կապակցությամբ 2025 թվականի մարտի 13-ի թիվ ՎԻՎ/80/2025 որոշմամբ հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ գործը՝

ՊԱՐԶԵՑ

Ի. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1.1 Հանձնաժողովը, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1.1-ին կետով սահմանված գործառույթների իրականացման շրջանակներում հիմք ընդունելով «Factor.am» լրատվական կայքի՝ «Արտաշատի

համայնքապետը հողամասեր է գնել ու ինքն իրեն թույլտվություն տվել եղած շինությունները քանդելու վերաբերյալ» վերտառությամբ հրապարակումը[1] և ղեկավարվելով Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի 1-ին մասով, իրականացրել է հրապարակմամբ ներկայացված տեղեկատվության հիման վրա վեր հանված Օրենսգրքի 169.31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի ղեկավար Կառլեն Մկրտչյանի կողմից դրսևորված առերևույթ խախտմանն առնչվող նյութերի ուսումնասիրություն, որի արդյունքում պարզել է.

1.2 Արտաշատ համայնքի ղեկավար Կառլեն Մկրտչյանը 2024 թվականի ապրիլի 23-ի N 1957-Ա որոշմամբ իր հետ փոխկապակցված անձին՝ կնոջը՝ Սերինե Գուլաբյանին և Կառլեն Մկրտչյանին (իրեն) տրամադրել է Արտաշատ համայնքի [redacted] հասցեում գտնվող՝ [redacted] կադաստրային ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում՝ ըստ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N [redacted] վկայականի՝ թիվ 1, թիվ 2, թիվ 3, թիվ 4, թիվ 5, թիվ 6, թիվ 7 և թիվ 8 շինությունների ամբողջությամբ քանդման թույլտվություն:

1.3 Ուսումնասիրության ընթացքում պարզ է դարձել նաև, որ վերոնշյալ որոշումը կայացնելուց առաջ Կառլեն Մկրտչյանի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված կարգով Հանձնաժողով չի ներկայացվել դրա կայացման փաստի վերաբերյալ հայտարարություն:

1.4 Հանձնաժողովի 2025 թվականի մարտի 13-ի թիվ ՎԻՎ/80/2025 որոշմամբ վերոնշյալ առերևույթ խախտման հիմքով հարուցվել է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ:

1.5 Հանձնաժողովը 2025 թվականի մարտի 14-ին Կառլեն Մկրտչյանին հասցեագրել է թիվ 01/1075-2025 գրությունը՝ կից ներկայացնելով թիվ ՎԻՎ/80/2025 Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին որոշումը, միաժամանակ հրավիրելով անձամբ կամ ներկայացուցչի միջոցով 2025 թվականի մարտի 24-ին ժամը՝ 15:00-ին մասնակցելու Օրենսգրքի 169.31-ին հոդվածի 1-ին մասով նախատեսված առերևույթ

[1] https://factor.am/803988.html

վարչական իրավախախտման հիմքով արձանագրության կազմմանը, ինչպես նաև 2025 թվականի մարտի 31-ին ժամը՝ 15:00-ին վերաբերելի նյութերի հիման վրա իրականացվող գործի քննությանը, ինչի կապակցությամբ վարույթի մասնակիցը պատշաճ ծանուցվել է (հիմք՝ AL0127038739AM ծանուցագիր):

1.6 2025 թվականի մարտի 21-ին Կառլեն Մկրտչյանի կողմից Հանձնաժողով է ներկայացվել առարկություն 2025 թվականի մարտի 13-ին վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին թիվ ՎԻՎ/80/2025 որոշման դեմ:

1.7 2025 թվականի մարտի 24-ին պատշաճ ծանուցված Կառլեն Մկրտչյանի բացակայությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ 41/2025 արձանագրությունը՝ Օրենսգրքի 169.31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշով:

1.8 Վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/80/2025 գործի քննությունը նշանակվել է 2025 թվականի մարտի 31-ին, ժամը՝ 15:00-ին, ինչի կապակցությամբ վարույթի մասնակիցը պատշաճ ծանուցվել է (հիմք՝ AL0127038739AM ծանուցագիր):

1.9 2025 թվականի մարտի 31-ին գործը քննվել է պատշաճ ծանուցված վարույթի մասնակցի ներկայացուցիչների՝ Արփինե Դավթյանի և Խորեն Հովակիմյանի ներկայությամբ:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

Արձանագրված առերևույթ իրավախախտման առնչությամբ 2025 թվականի մարտի 21-ին Կառլեն Մկրտչյանի կողմից Հանձնաժողով ներկայացված գրավոր առարկությամբ, ինչպես նաև գործի քննության ընթացքում վարույթի մասնակցի ներկայացուցիչների կողմից ներկայացվել են հետևյալ պարզաբանումները՝

Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 596-ն որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 120-րդ կետի համաձայն, քանդման (ապամոնտաժման) թույլտվությունն իրավասու մարմնի կողմից տրամադրվում կամ մերժվում է սույն կարգի 100-րդ կետով սահմանված ժամկետներում (...):

Նույն որոշման թիվ 1 հավելվածի 100-րդ կետի համաձայն իրավասու մարմինը համաձայնեցնում է նախագծային փաստաթղթերը և միաժամանակ տալիս է շինարարության թույլտվությունը՝ սույն կարգի 98-րդ կետում նշված դիմումն ստանալու օրվանից՝

1) II ռիսկայնության աստիճանի (կատեգորիայի) օբյեկտների համար՝

ա. 3-օրյա ժամկետում՝ բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի կամ սերտիֆիկացված նախագծերի տեղակապման դեպքում, ինչպես նաև շենքերի և շինությունների արտաքին գծային ինժեներական ենթակառուցվածքների ստեղծման դեպքում.

(...):

Վերոնշյալի համատեքստում, փաստում ենք հետևյալը.

1. 23.04.2024 թվականի Արտաշատի համայնքապետարան, Սերինե Գալուբյանի կողմից մուտքագրված դիմումը համապատասխանել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածով սահմանված դիմումին ներկայացվող ընդհանուր պահանջներին,
2. Սույն դիմումի հիման վրա վարչական մարմնում հարուցվել է վարչական վարույթ,
3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-ն որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածով սահմանված 3- օրյա ժամկետում դիմումին տրվել է ընթացք, որն էլ եզրափակվել է վարչական ակտի ընդունմամբ /Արտաշատ համայնքի ղեկավարի 23.04.2024 թվականի թիվ 1957-Ա որոշում/:

«*Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն*՝ եթե վարչական ակտ ընդունելու իրավասություն ունեցող վարչական մարմինը սույն օրենքի 31-րդ հոդվածի 1- ն մասի «ա», «դ» և «ե» կետերի պահանջների պահպանմամբ ներկայացված դիմումի հիման վրա հարուցված վարույթի արդյունքում օրենքով սահմանված ժամկետում որևէ որոշում չի կայացնում, ապա վարչական ակտը համարվում է ընդունված, և դիմողը կարող է ձեռնամուխ լինել համապատասխան իրավունքի իրականացմանը (...):

Համայնքի ղեկավարը՝ որպես վարչական մարմին և որպես համայնքի գործադիր մարմին 3-օրյա ժամկետում ձեռնամուխ է եղել իմպերատիվ բնույթ կրող նորմերի պահանջների իրականացմանը, ինչի արդյունքում կայացրել է համապատասխան որոշում,

որն ունի համընդհանուր կիրառելիություն: Սահմանված ժամկետում որոշում չկայացվելու դեպքում դիմողը իրավունք ուներ ձեռնամուխ լինելու համապատասխան իրավունքի իրականացմանը:

Որպես՝ պաշտոն զբաղեցնող անձ, սույն գործառույթը իրականացնելիս, Կառլեն Մկրտչյանը իր հետ փոխկապակցված անձին՝ կնոջը՝ Սերինե Գալուբյանին՝ քանդման թույլտվության որոշում տրամադրելն իր մեջ որևէ արտոնություն չի ներառում, չի կատարել այնպիսի գործողություն, որը սպառնալիք է հանդիսացել պետական կամ հասարակական կարգին, սոցիալիստական սեփականությանը, քաղաքացիների իրավունքներին ու ազատություններին, կառավարման սահմանված կարգին, հակառակը՝ որոշում կայացնելը պայմանավորված է եղել անձի սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների, ազատությունների կամ օրինական շահերի պաշտպանության անհրաժեշտությամբ:

Ստացվում է, որ տվյալ դեպքում, սույն որոշումը կայացնելը, չի ազդել և չէր կարող ազդել Կառլեն Մկրտչյանի պաշտոնեական պարտականությունների անաչառ և օբյեկտիվ կատարման վրա, որպես պաշտոնատար անձ, իր հետ փոխկապակցված անձի մասնավոր շահերով չի առաջնորդվել, հետևաբար հանձնաժողովին գրավոր հայտարարություն ներկայացնելու իրավական պահանջ չէր կարող ծագել:

III. Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները.

Հանձնաժողովը, ուսումնասիրելով թիվ ՎԻՎ/80/2025 գործում առկա նյութերը, կատարել է հանգամանքների քննություն և հաստատված է համարում, որ՝

3.1 Արտաշատի համայնքապետարանի պաշտոնական կայքէջում (https://artashat.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=2a10100d-5361-444f-8f19-296e387e67fb) հրապարակված տվյալների համաձայն՝ Կառլեն Սամվելի Մկրտչյանը 2021 թվականի դեկտեմբերի 5-ից մինչ օրս զբաղեցնում է Արտաշատ խոշորացված համայնքի ղեկավարի պաշտոնը:

3.2 Արդարադատության նախարարության ՔԿԱԳ շտեմարանի տվյալների, ինչպես նաև պաշտոնատար անձի 2023 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի տարեկան հայտարարագրի համաձայն՝ Սերինե Գալուբյանը հանդիսանում է Կառլեն Մկրտչյանի կինը:

3.3 Արտաշատ համայնքի ղեկավար՝ Կառլեն Մկրտչյանը 2024 թվականի ապրիլի 23-ի N 1957-Ա որոշմամբ իր հետ փոխկապակցված անձին՝ կնոջը՝ Սերինե Գուլաբյանին և Կառլեն Մկրտչյանին (իրեն) տրամադրել է Արտաշատ համայնքի [redacted] հասցեում գտնվող՝ [redacted] կադաստրային ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում՝ ըստ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N [redacted] վկայականի՝ թիվ 1, թիվ 2, թիվ 3, թիվ 4, թիվ 5, թիվ 6, թիվ 7 և թիվ 8 շինությունների ամբողջությամբ քանդման թույլտվություն:

3.5 2024 թվականի ապրիլի 23-ի N 1957-Ա որոշմամբ Արտաշատ [redacted] հասցեում գտնվող՝ [redacted] կադաստրային ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում վերոնշված շինությունների ամբողջությամբ քանդման թույլտվությամբ միաժամանակ շինարարության թույլտվություն չի տրամադրվել:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օրենքի գործողությունը տարածվում է հանրային իշխանության մարմինների վրա, ինչպես նաև հանրային պաշտոններ և հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վրա:

4.2 Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հանրային պաշտոնը դասակարգվում է խմբերի՝ պետական և համայնքային:

4.3 Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգավորման համաձայն՝ համայնքի ղեկավարի պաշտոնը հանդիսանում է **համայնքային քաղաքական պաշտոն**:

4.4 Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավակարգավորման համաձայն՝ շահերի բախումն իրավիճակ է, երբ պաշտոն զբաղեցնող անձի մասնավոր շահերն ազդում են կամ կարող են ազդել վերջինիս պաշտոնեական պարտականությունների անաչառ և օբյեկտիվ կատարման վրա:

4.5 Նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավակարգավորման համաձայն՝ պաշտոն զբաղեցնող անձի մասնավոր շահը ներառում է որևէ արտոնություն իրեն կամ իր հետ փոխկապակցված անձանց, ինչպես նաև այն անձանց կամ կազմակերպություններին, որոնց

հետ ինքը կամ իր հետ փոխկապակցված անձն ունի գործարար, քաղաքական կամ այլ գործնական կամ անձնական հարաբերություններ (…):

4.6 Նույն հոդվածի 11-րդ մասը կարգավորում է փոխկապակցված անձանց շրջանակը, որի 1-ին կետի համաձայն՝ սույն հոդվածի իմաստով՝ փոխկապակցված անձինք են պաշտոն զբաղեցնող անձի **ամուսինը**, պաշտոն զբաղեցնող անձի կամ նրա ամուսնու զավակը (այդ թվում՝ որդեգրված), ծնողը (այդ թվում՝ որդեգրողը), քույրը, եղբայրը:

4.7 Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ **պաշտոն զբաղեցնող անձը պետք է խուսափի շահերի բախման իրավիճակի առաջացումից**, **ձեռնպահ մնա շահերի բախման իրավիճակում գործողություն (անգործություն) կատարելուց** կամ որոշում ընդունելուց, այդ թվում՝ որոշման կայացմանն ուղղված նախապատրաստական աշխատանքներին (փաստաթղթերի նախագծերի կազմում, քննարկումների կազմակերպում, որոշման վրա ազդեցություն ունեցող հանձնախմբերի ձևավորում և այլն) մասնակցելուց կամ այլ կերպ որոշման կայացման գործընթացին մասնակցելուց:

4.8 Նույն հոդվածի 5-րդ մասով սահմանված իրավակարգավորման համաձայն՝ եթե վերադաս կամ անմիջական ղեկավար ունեցող պաշտոն զբաղեցնող անձի կողմից կամ նրա մասնակցությամբ իր լիազորությունների շրջանակում գործողության կատարումը (անգործությունը) կամ որոշման ընդունումը կարող է հանգեցնել շահերի բախման իրավիճակի առաջացման, **ապա պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է 10-օրյա ժամկետում** իր վերադաս անձին կամ անմիջական ղեկավարին ներկայացնել գրավոր հայտարարություն **շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին**, որը ենթակա է քննարկման անհապաղ:

4.9 Նույն հոդվածի 7-րդ մասով սահմանված իրավակարգավորման համաձայն՝ վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող կամ **քաղաքական պաշտոն զբաղեցնող անձը սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքերում պարտավոր է այդ մասին գրավոր հայտարարություն ներկայացնել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով**, որն առաջարկում է ձեռնարկել իրավիճակի լուծմանն ուղղված քայլեր, այդ թվում՝ հանդես գալ կոնկրետ իրավիճակում շահերի առկայության մասին հայտարարությամբ:

4.10 Նույն հոդվածի 8-րդ մասով սահմանված իրավակարգավորման համաձայն՝ նախքան վերադասի կամ անմիջական ղեկավարի գրավոր համաձայնությունը կամ

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի առաջարկությունը ստանալն անձը պետք է ձեռնպահ մնա հարցի վերաբերյալ գործողություն կատարելուց կամ որոշում կայացնելուց, բացառությամբ այն դեպքերի, երբ անհապաղ գործողություն կատարելը կամ որոշում կայացնելը պայմանավորված է անձանց կյանքի, առողջության, իրավունքների, ազատությունների կամ օրինական շահերի, պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության պաշտպանության անհրաժեշտությամբ՝ այդ մասին տեղեկացնելով վարույթի մասնակիցներին, իր վերադասին կամ անմիջական ղեկավարին, իսկ վերադաս կամ անմիջական ղեկավար չունենալու դեպքում՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին:

4.11 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1.1-ին կետի համաձայն՝ Հանձնաժողովի գործառույթներից է՝ պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների, բացառությամբ նվերներ ընդունելու սահմանափակումների, և **շահերի բախման կարգավորումների պահպանմանը հետևելը**:

4.12 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.13 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.14 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ **իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:**

4.15 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.31-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.16 Օրենսգրքի 169.31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող կամ **քաղաքական պաշտոն զբաղեցնող անձի կողմից շահերի բախման իրավիճակի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին գրավոր հայտարարություն չներկայացնելը**՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:

4.17 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին:

4.18«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, ***<u>այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:</u>***

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 21-րդ հոդվածը սահմանել է, որ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

Արարքի նվազ նշանակությունը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ թեև ձևականորեն արարքը կարող է պարունակել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ,

սակայն ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը այնպիսի էական վնաս չի պատճառվել, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը դիտարկվի համաչափ: Նվազ կարևորությունը կիրառելիս անհրաժեշտ է հաշվի առնել խախտման բնույթը, դրա որակական կողմը, ինչպես նաև խախտում թույլ տված անձի վերաբերմունքը խախտման նկատմամբ:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում՝ համադրելով գործում առկա փաստական հանգամանքները, դրանց նկատմամբ կիրառելի իրավական նորմերի պահանջների հետ, Հանձնաժողովը հաստատված է համարում, որ արձանագրված իրավախախտումն ունի նվազ նշանակություն հետևյալ պատճառաբանությամբ.

Թեև, Արտաշատ համայնքի ղեկավար Կառլեն Մկրտչյանի կողմից 2024 թվականի ապրիլի 23-ին ընդունված N 1957-Ա որոշմամբ իր հետ փոխկապակցված անձին՝ կնոջը՝ Սերինե Գուլաբյանին և Կառլեն Մկրտչյանին (իրեն) Արտաշատ համայնքի [redacted] հասցեում գտնվող թվով 8 շինությունների քանդման թույլտվության տրամադրումը կարող էր հանգեցնել շահերի բախման իրավիճակի առաջացման, որի վերաբերյալ վերջինս պարտավոր էր 10-օրյա ժամկետում հայտարարություն ներկայացնել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով, այդուհանդերձ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված որոշմամբ քանդման թույլտվության հետ միաժամանակ, չի տրամադրվել նաև շինարարության թույլտվություն, Հանձնաժողովն արձանագրում է, որ նման պայմաններում Կառլեն Մկրտչյանի կողմից առանց Հանձնաժողին համապատասխան հայտարարություն ներկայացնելու իր հետ փոխկապակցված անձին՝ կնոջը և ինքն իրեն, վերջիններիս սեփականության իրավունքով պատկանող հողամասում առկա շինությունների քանդման թույլտվության տրամադրելու մասին որոշում կայացնելը օրենսդրությամբ պահպանվող հասարակական շահի տեսանկյունից ունի նվազ նշանակություն

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին

մասի 1-ին կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 21-րդ հոդվածով, Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի ղեկավար Կառլեն Մկրտչյանին ազատել վարչական պատասխանատվությունից՝ հայտարարելով բանավոր դիտողություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կառլեն Մկրտչյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ